# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## NՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-21/10-2

ք.Երևան

«11»մայիսի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԷՄ ԷՄ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մ.Գազանճեանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա)պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք,ապա՝

ա)պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ)հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է,ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա)ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները,եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր,սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ [illegible]

ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը` պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք` պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն

այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 308800/երեք հարյուր ութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[20] Սույն

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը։

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում և գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը։ Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար։

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում։

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը

պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք)ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի` պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ),կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանի որեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով,որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի առաջարկության առկայության դեպքում,պայմանով,որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով,բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները

պարտավորությունների կատարման հետ
հարաբերությունները կարգավորվում են այդ կապված
կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ
համար պատասխանատու է Վաճառողը: կարգավորող նորմերով, և դրանց

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-
թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ
լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ`
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի
կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն
անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման
համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն
ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին
ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող
ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու
մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը:
Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու
համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով
սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն
ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին
ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն
ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում
են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք
չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու
օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,
յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N
1, N2, N3 և N3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի
մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ
կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և
ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե`ք.Երևան, Գ.
Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ `01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ` 2470102796740000

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ԷՍԷՍԷՅՋԷՅՋ» ՍՊԸ**

Հասցե` ք.Երևան
Դավիթաշեն 4րդ թաղամաս .38
շենք ,53 տարածք
Բանկ` Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050422344061001
ՀՎՀՀ 00218923

---------------------------------
/ստորագրություն/

Հավելված
«11» մայիսի 2021թ. կնք...
ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-21/10-2 ծածկագրով պայմանա...

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախ. Միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Չափաբաժնի անվանումը | Անվանում | Ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չ/Մ | Միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը ՀՀ դրամ | Չափաբաժնի ընդհանուր գին | Ընդհանուր քանակ | Մատակարարում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | Հասցե | Ենթակա քանակ | Ժամկետներ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 30237113/13 | Հ ար ակ ց ի չ /1/ | Հ ար ակ ց ի չ /1/ | Neutrik NBNC75 BWU13 | Հարակցիչ BNC Plug L-4.5CHD Cable մալուխների համար և Connector Boots<br>• Guarantees a lifetime of min. 1000 mating cycles Technical Information<br>Connection Type BNC 75 Ω<br>Gender male Electrical<br>Contact resistance ≤ 3 mΩ (inner)<br>Contact resistance ≤ 2 mΩ (outer)<br>Dielectric strength 1,5 kVdc<br>Impedance 75 Ω<br>Insulation resistance > 5 GΩ Rated voltage <50 V<br>VSWR ≤1.050/>32 dB up to 1 GHz<br>≤1.065/>30 dB up to 2 GHz<br>≤1.100/>26 dB up to 3 Ghz<br>Mechanical<br>Cable O.D. 7.3 mm<br>Cable retention > 30 N (Center)<br>Crimp size 7,36 Hex crimp (shield) acc. MIL22520/5-41(A)<br>Crimp size (pin) 1,6 Square crimp (pin) acc. IEC 60803 (die designation 2)<br>Insertion force < 25 N<br>Lifetime > 1000 mating cycles Locking device Bayonett<br>Cable anchoring Jacket crimping | հ ա տ | 1350 | 67500 | 67500 | 50 | Ք.Եր ևան, Գ.Հո վսե փյա ն 26 | 50 | Պայմանագ իրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո/եթե մատակար արը չի համաձայնվում մատակար արել ավելի շուտ/ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | ***30237113/15*** | *Հ ար ակ ց ի չ /3/* | *Հ ար ակ ց ի չ /3/* | Neutrik NC3MXX | Male 3-pin XLR connector<br>• Male connector with improved locking Technical Information Connection Type XLR Gender male Electrical<br>Capacitance between contacts ≤ 4 pF<br>Contact resistance ≤ 3 mΩ<br>Dielectric strength 1, 5 kVdc<br>Insulation resistance > 10 GΩ (initial) Rated current per contact 16 A<br>Rated voltage < 50 V<br>Mechanical<br>Cable O.D. 3.5 - 8.0 mm Insertion force ≤ 20 N<br>Withdrawal force ≤ 20 N Lifetime > 1000 mating cycles<br>Wiresize max. 2.5 mm²<br>Wiresize max. 14 AWG Wiring Solder contacts<br>Locking device Latch lock | հ ա տ | 1600 | 80000 | 80000 | 50 | Ք.Եր և ան, Գ.Հ ո վ ս ե փ յ ա ն 26 | 50 | Պ ա յ մ ա ն ա գ ի ր ն ո ւ ժ ի մ ե ջ մ տ ն ե լ ո ւ օ ր վ ա ն ի ց հ ա շ վ ա ծ 20 օ ր ա ց ո ւ ց ա յ ի ն օ ր հ ե տ ո /ե թ ե մ ա տ ա կ ա ր ա ր ը չ ի հ ա մ ա ձ ա յ ն վ ո ւ մ մ ա տ ա կ ա ր ա ր ե լ ա վ ե լ ի շ ո ւ տ/ |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | *30237113/16* | *Հ ար ակ ց ի չ /4/* | *Հ ար ակ ց ի չ /4/* | Neutrik NC3FXX | Female 3-pin XLR connector 3 pole female cable connector with black metal housing and silver contacts. Technical Information<br>Connection Type XLR<br>Gender female<br>Electrical<br>Capacitance between contacts ≤ 4 pF Contact resistance ≤ 3 mΩ<br>Dielectric strength 1,5 kVdc<br>Insulation resistance > 10 GΩ (initial) Rated current per contact 16 A<br>Rated voltage < 50 V<br>Mechanical<br>Cable O.D. 3.5 - 8.0 mm<br>Insertion force ≤ 20 N<br>Withdrawal force ≤ 20 N<br>Lifetime > 1000 mating cycles Wiresize max. 2.5 mm²<br>Wiresize max. 14 AWG Wiring Solder contacts<br>Locking device Latch lock | հ ա տ | 1750 | 87500 | 87500 | 50 | Ք.Եր և ան, Գ.Հ ո վ ս ե փյ ա ն 26 | 50 | Պ այ մ ան ագ ի ր ն ո ւ ժ ի մ ե ջ մ տն ե լ ո ւ օ ր վ ան ի ց հ աշ վ ած 20 օ ր աց ո ւ ց այ ի ն օ ր հ ե տո /ե թ ե մ ատակ ա ր ար ր չ ի հ ամ աձ ա յ ն վ ո ւ մ մ ատակ ա ր ար ե լ ավ ե լ ի շ ո ւ տ/ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 32211200/4 | Մոդուլային Patch Bay | Մոդուլային Patch Bay | Neutrik NYS-SPP-L1 | Modular 48-Point 1/4" TRS Balanced Patch Bay<br>• Individual grounding<br>• Ruggedized metal housing<br>• Economic and versatile designed 1/4" modular Patch Panel with 2 rows of jack sockets<br>• 48 balanced channels with fully PCB wired jack (24 vertical PC boards), 24 front pairs and corresponding 24 rear pairs<br>Technical Information Connection Type Patch Panel Electrical Signal Type AES/EBU Signals (analog) Contact resistance < 10 mΩ<br>Contact resistance < 10 mΩ<br>Dielectric strength 1 kVdc<br>Frequencyrange DC to > 50 MHz<br>Insulation resistance > 1 GΩ @ 500 V dc<br>Channel separation > 100 dB @ 10 kHz, 600 terminated<br>> 40 dB @ 6 MHz, 110 terminated Handles<br>Phantom Power no<br>Mechanical<br>Insertion force < 20 N Withdrawal force > 10 N<br>Lifetime > 10000 mating cycles Locking device<br>Retention spring<br>Material<br>Contacts Bronze, tin plated (Switch contacts) Shell<br>ABS (Jacks)<br>Front panel Steel<br>/ Neutrik NYS-SPP-L1 Modular 48-Point 1/4" TRS Balanced Patch | հատ | 36900 | 73800 | 73800 | 2 | ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 | 2 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային նոր հետո /եթե մատակար արդյունքում համաձայն ում մատակար արել ավելի շուտ/ |

ԳՆՈՐԴ
«Հայաստանի հանրային ին

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՄԷՄԷՅՁԷՅՁ»ՍՊԸ

**հեռուստաընկերություն»**
**ՓԲԸ**
Հասցե՝ ք.Երևան, Գ.
Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հասցե՝ ք.Երևան
Դավիթաշեն 4րդ թաղամաս .38
շենք ,53 տարածք
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2050422344061001
ՀՎՀՀ 00218923

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված
«11»մայիսի 2021թ. կն…
ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-21/10-2 ծածկագրով պայման…

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` …ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 30237113/13 | Հարակցիչ /1/ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 |
| 3 | 30237113/15 | Հարակցիչ /3/ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 4 | 30237113/16 | Հարակցիչ /4/ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 87500 | 87500 | 87500 | 87500 | 87500 | 87500 | 87500 |
| 8 | 32211200/4 | Մոդուլային Patch Bay | 0 | 0 | 0 | 0 | 0 | 73800 | 73800 | 73800 | 73800 | 73800 | 73800 | 73800 |

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե` ք.Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ` 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102796740000

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՍ ԷՍ ԷՅՉ ԷՅՉ» ՍՊԸ
Հասցե` ք.Երևան
Դավիթաշեն 4րդ թաղամաս 38
շենք, 53 տարածք
Բանկ` Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050422344061001
ՀՎՀՀ 00218923

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N3
«11»մայիսի 2021թ.կնքված
ՀՀՀ-Հ ՄԱԱՊՁԲ-21/10-2ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________ | ____________ |
| ____________ | ____________ |
| գտնվելու վայրը ________ ____ | գտնվելու վայրը ________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ . | հվհհ ____________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝Պայմանագիր/անվանումը՝
_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝«____»«________________»20թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ.դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց ____________ ստորագրություն

Ապրանքը ընդունեց ____________ ստորագրություն

ЭС ЭС ЭЙДЖ ЭЙДЖ
"ՏՏHH"
00218923
LIMITED LIABILITY COMPANY
YEREVAN

ազգանուն,անուն

Կ.Տ.

ազգանուն,անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«11»մայիսի 2021թ.կնքված
ՀՀՀ-Հ ՄԱԱՊՁԲ-21/10-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ __________-ի (այսուհետ՝ Գնորդ) և __________________

անվանումը Գնորդի անվանումը Վաճառողի

(այսուհետ՝Վաճառող)միջև 20 թ.__________________-ին կնքված N__ ______

համարը պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ.______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից,յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն,անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտնախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն,անուն

ստորագրություն